ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 1-ին, կիրակի - Գ կիր. զկնի Հոգեգալստեան։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Արժանապատիվ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Հունիսի 8-ին, կիրակի - Դ կիր. զկնի Հոգեգալստեան։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Հունիսի 15-ին, կիրակի - Ե կիր. զկնի Հոգեգալստեան։ Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը «Եւ լուայ ձայն յերկնից, որ ասէր ցիս. «Գրեա՛, երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի. զայս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա» (Հովհ. Հայտ. ԺԴ 13) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 13)։

Հունիսի 29-ին, կիրակի - Վարդավառ։ Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 19)։

Հուլիսի 6-ին, կիրակի- Բ կիր. զկնի Վարդավառի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Հուլիսի 13-ին, կիրակի- Գ կիր. զկնի Վարդավառի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը։ «Հայր Մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը «Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի Քէն, որ ես Հայր Լուսոյ» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 23)։

Հուլիսի 20-ին, կիրակի- Դ կիր. զկնի Վարդավառի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Առեն աբեղա Ճեպեճյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 25)։

Հուլիսի 27-ին, կիրակի- Ե կիր. զկնի Վարդավառի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կտրիճ քահանա Դևեջյանը։ «Հայր մեր»-ից առաջ Արժանապատիվ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 27)։